«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Գեղագիտական դաստիարակությունը դպրոցում
ԱՌԱՐԿԱ	Տեխնոլոգիա
ՀԵՂԻՆԱԿ	Աբրահամյան Լուիզա Սուրիկի
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի N8 հիմն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն----------2

Գեղագիտական դաստիարակությունը դպրոցում----------5

Գեղագիտական դաստիարակության ուղիները ու միջոցները տարրական

դպրոցում----------9

Գեղագիտական դաստիարակությունը«Տեխնոլոգիա» առարկայի դասաժամին-14

Եզրակացություն----------20

Գրականություն----------23

Ներածություն

Գեղագիտական դաստիարակությունն ուղղված է ստեղծագործական անձի ձևավորմանը, ընդգրկելով նրա ինտելեկտուալ, հուզական, կամային արժեքակողմնորոշիչ կողմերը: Գեղագիտական ուսուցումը տալիս է գեղագիտական գիտելիքներ: Գեղագիտական դաստիարակության պրոցեսում գեղագիտությունը ոչ թե պարզապես յուրացվում է մարդու կողմից որպես որոշակի գիտելիք, այլ դառնում է կարծես բուն իր մի մասը, քանի որ նա անձը ձևավորում է չորս բաղադրամասերի ամբողջական ներգործությամբ, այն է գեղագիտական տեսության բնական ու հասարակական կյանքի, արվեստի ստեղծագործությունների և սեփական գեղագիտական գործունեության:

Գեղագիտական դաստիարակվածությունը ենթադրում է անձի գեղագիտական համոզմունքների միասնությունը գործունեության բոլոր ոլորտներում նրա ինտուիտիվ կողմնորոշումների ու ինքնադրսևորումների հետ: Գեղագիտական դաստիարակության ուժեղ կողմը նրանում դիտակտիկայի բացակայությունն է: Անձի վրա ներգործությունն ընթանում է անշահախնդիր, կամաց-կամաց, ոչ միտումնավոր:

Եթե բարոյական դաստիարակությունը ենթադրում է տվյալ հասարակության ակտուալ սոցիալական հատկանիշներով մարդու ձևավորումը, ապա գեղագիտական դաստիարակությունը նկատի ունի ոչ միայն տվյալ հասարակությունը, այլև ամբողջ մարդկությունը որպես անձի կենսագործունեության ոլորտ, կողմնորոշիչ և չափանիշ: Գեղագիտական դաստիարակվածությունը զարգացնում է մարդու ստեղծագործական ընդունակությունները, սովորեցնում է նրան աշխարհին վերաբերվել իրոք մարդկայնորեն:

Նախ և առաջ գեղագիտական դաստիարակվածությունը սրում է անմիջականորեն գիտակցության գեղագիտական բնագավառը, գեղագիտական ճաշակը, արժեքային կողմնորոշումները, իդեալների դրույթները, չափանիշները, սակայն այն իր ներգործության ոլորտն է վերցնում նաև ամբողջ անձը: Գեղագիտական դաստիարակվածության ցանկալի, լավագույն արդյունքն է ամբողջական ու ներդաշնակ, ինքնին և սոցիալապես արժեքավոր, ստեղծագործական որևէ ակտիվ անձի ձևավորումը, որն ունի անհատական բարձր գեղագիտական կուլտուրա, ինչը թույլ է տալիս մարդուն ապրելու մարդասիրական կյանքով ու գործելու համոզված նպատակասլաց արդյունավետ գործիմաց, համամարդկայնորեն, իմաստավոր կերպով:

Արվեստը գեղագիտական դաստիարակության միջուկն է ու գլխավոր միջոցը, որը տարվում է դիզայնի, սպորտի և գործողությոն մյուս՝ ձևերի գեղագիտական ասպետների օգնությամբ, որոնք իրենց մեջ կրում են գեղագիտական բովանդակություն: Մանկավարժությունը գեղագիտական դաստիարակությունը դիտում է որպես կյանքում և արվեստում գեղեցիկը ընկալելու, զգալու, հասկանալու ունակությունների զարգացում, որպես շրջապատող աշխարհը գեղեցիկի օրենքներով վերափոխելու երեխայի ձգտումի դաստիարակում,որպես հաղորդակցում գեղարվեստական գործունեությանը և ստեղծագործական ունակությունների զարգացում:

Գեղագիտական դաստիարակության բնագավառում հատուկ դեր է հատկացվում արվեստին:Հուզելով և ուրախացնելով՝ արվեստը երեխաների առջև բացահայտում է կենսական երևույթների սոցիալական իմաստը, ստիպում է նրանց քննախույզ հայացքով նայել շրջապատող աշխարհին, արթնացնում է բարին գնահատելու,չարը դատապարտելու զգացումներ:

Գեղագիտական դաստիարակության խնդիրները անմիջականորեն կապված են նախադպրոցական մանկան բարոյական կերպարի ձևավորման հետ:Մանկանը սովորեցնել, որ նա մարդկային հարաբերություններում բարին տարբերի չարից, ընկալի ձևի , գծի,ձայնի, գույների գեղեցկությունը, դա նշանակում է նրան դարձնել ավելի լավ, մաքուր, բովանդակալից:

Գեղագիտական դաստիարակության բնագավառում ավելի նշանակալից են բարոյագիտական հետևյալ հատկանիշները՝ երեխաների հուզական վերաբերմունքը՝կյանքի իրենց ըմբռնումին մատչելի սոցիալական երևույթների նկատմամբ, ուրիշի ուրախությունը կամ տխրությունը համակիր լինելու ձգտումը, առօրյան ձևափոխելու ակտիվ փորձերը,կյանքը գեղեցկացնող, իր ուժերին համապատասխան, գեղարվեստական աշխատանքներին մասնակցելու ցանկությունը, համատեղ գործելու պահանջմունքը, ուրիշների հաջողություններով ուրախանալու ունակությունը և այլն:

Գեղագիտական զգացմունքների դաստիարակության գործը արդյունավետ կերպով կազմակերպելու համար պետք է տարբերել ոչ միայն գեղեցիկի, վեհի, հերոսականի, ողբերգականի, կոմիկականի զգացմունքները, այլև ներդաշնակության,չափի, ռիթմի, սիմետրիայի զգացումները:Գեղագիտական ընկալումների և զգացմունքների հիման վրա

աստիճանաբար ձևավորվում է մարդու գեղագիտական ճաշակը: Ճաշակը առավել բարդ երևույթ է, քան եզակի գեղագիտական ընկալումը: Այն անհատական գեղագիտական փորձի ընդհանրացումն է և ինտեգրացումը: Ըստ որում ճաշակը ոչ միայն անհատական, այլև հասարակական գիտակցության գործոն է:

Հանդիպումը, գեղեցիկի հետ, որտեղ էլ այն տեղի ունենա՝ աշխատանքում, արվեստում կամ բնության գրկում իզուր չի անցնում: Նա զարգացնում է մարդու գեղագիտական զգացմունքը՝ դարձնելով նրան ավելի դյուրընկալ, ավելի զգայուն, ավելի մարդկային, օգնում է մշակելու գեղագիտական ճաշակ, այսինքն՝ բնության երևույթների, հասարակական կյանքի, արվեստի ստեղծագործությունների գեղեցկությունը զգալու, գնահատելու ընդունակությունը: Մեզ գեղագիտորեն դաստիարակում է ողջ շրջապատող աշխարհը: Գեղեցկությունը մարդու կյանքի մեջ մուտք է գործում բազմաթիվ դռներից: Գեղագիտական զգացմունքը հատուկ է յուրաքանչյուր նորմալ զարգացած մարդուն: Անձի գեղագիտական որակների հիմքերը դրվում են վաղ տարիքում, սակայն դրանք կազմավորվում և պահպանվում են ամբողջ կյանքի ընթացքում: Անձի զարգացումը և նրա գեղագիտական մշակույթի ձևավորումը կարևորագույն խնդիրներ են,որոնք մշտապես հետաքրքրել և ուսումնասիրվել են տարբեր ժամանակների ու հոգեբանների կողմից:

ՆՊԱՏԱԿԸ

ա. Սովորողների գեղագիտական ընկալումը ու ըմբռնումների ձևավորումն և դաստիարակումը:

բ. Գեղագիտական դատողությունների ու մտածողության ձևավորումը:

գ. Գեղագիտական պատկերացումների ձևավորումն ու դաստիարակումը:

դ. Գեղագիտական զգացմունքների ու գնահատումների դաստիարակումը:

ե. Գեղագիտական ճաշակի դաստիարակումը:

զ. Գեղագիտական ինքնադաստիարակությունը և այլն:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

ա. Ձևավորել գեղագիտական ընկալում,պետք է հասնել նրան,որ աշակերտը կարողանա ընկալել կինոնկարում ռեժիսորի և օպերատորի աշխատանքի յուրահատկությունները,

արտիստի խաղը, զգա արծվի խոյանքը,մարգագետնի գեղեցկությունը,այս կամ այն արարքի վեհությունը,իսկ դա նշանակում է զարգացնել երեխայի աչքը, ականջը և մյուս զգայարանները:

բ. Ձևավորել սովորողների գեղագիտական զգացմունքները՝ վեհի, ստորի, ողբերգականի, կոմիկականի զգացում և այլն: Անել այնպես,որ վեհը առաջացնի ուրախության, հպարտության զգացում, ստորը՝բացասական հույզեր և այլն:

գ. Սովորողների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ, գնահատման կարողություն:

դ. Զարգացնել գեղագիտական պահանջմունքները, հետաքրքրությունները, ձևավորել հոգևոր պահանջմունք կարդալու, նկարելու, նվագելու, ասմունքելու և այլն:

ե. Զարգացնել գեղագիտական կառողությունները, ընդունակությունները ,յուրաքանչյուրի մեջ հայտնագործել Մոցարտին, ի հայտ բերել նրա հնարավորությունները ձիրքերը, օժտվածությոնը և մղել գեղագիտական ակտիվության:

Գեղագիտական դաստիարակությունը դպրոցում

Գեղագիտական դաստիարակության նպատակը իրականության նկատմամբ գեղագիտական հարաբերության ձևավորումն է: Կիրառվում է նաև « էսթետիկական» երևույթը,որը ծագում է հունարեն esthetis արմատից է, որը նշանակում է «զգացմունքով եմ ընկալում»: Առաջին անգամ կիրառվել է գերմանացի փիլիսոփա Բաումհարտենը 200 տարի առաջ: Գեղագիտական դաստիարակությունը իրականության և արվեստի նկատմամբ մարդու գեղագիտական հարաբերության ձևավորման ու կառավարման գործընթացն է: Մարդու գեղագիտական հարաբերությունը իրականության նկատմամբ ձևավորվել է 100 հազար և ավելի տարիների ընթացքում: Հազարամյակներ անցան, մինչև գեղեցիկին անհաղորդ վայրենին՝ նախամարդը, աճեց և հասավ գեղեցիկը ընկալելու,գիտակցելու աստիճանին: Յուրաքանչյուր անհատի մեջ գեղագիտական վերաբերմունքը ձևավորվում է կյանքի ընթացքում, առանձին անհատների մոտ դա չի էլ ձևավորվում, որը պետք է բացատրել

դաստիարակության թերություններով: Գեղագիտական դաստիարակությունը դպրոցում լուծում է մի շարք խնդիրներ:

Գեղագիտական դաստիարակությունը դպրոցում իրականացվում է կրթության բովանդակության մեջ մտնող այնպիսի առարկաների միջոցով, ինչպիսիք են գրականությունը, պատմությունը, կերպարվեստ, երաժշտությունը և այլն: Արվեստի խմբակներում մասնակցությունը, արտադպրոցական գեղագիտական կենտրոններ, մանկապատանեկան ստեղծագործական տներ հաճախելը և այլն: Մեծ գործ ունի անելու նաև ընտանիքը իր ներքին կյանքով ավանդույթների դրվածքով, կենցաղով ճաշակով և այլն:

Համակողմանի և ներդաշնակ զարգացած մարդ կարող է համարվել նա, ով ունի նաև գեղագիտական դաստիարակվածություն և կրթվածություն: Վ. Գ. Բելինսկին ասում էր «Աշխարհը կարելի է ճանաչել երկու ուղիով՝ գիտության և արվեստի»:

Գղագիտական դաստիարակությունը դաստիարակողի ու դաստիարակվողների համատեղ ջանքերի գործընթաց է՝ դաստիարակվողների գեղագիտական կուլտուրան ձևավորելու համար: Գեղագիտական դաստիարակության էության մեջ դրսևորվում են երեք կողմեր՝

1. Անձի գեղագիտական ընկալումներն ու ըմբռնումները:
2. Գեղագիտական պատկերացումներն ու դատողությունները:
3. Գեղագիտական մտածողությունն ու համոզմունքները:

Առանց այդ որակների աշակերտը չի կարող արժևորել ու գնահատել արվեստի գործերը, նա չի ունենա գեղագիտական ճաշակ:

Աշակերտների գեղագիտական կուլտուրան բարձրացնելու նպատակով պետք է նրանց պարզաբանել արվեստի, ուղղությունների, ժանրերի մասին գիտելիքների նշանակությունը ու ձգտել դրանք դարձնել նրանց սեփականությունը, դա պետք է անել ոչ թե այն բանի համար որպեսզի նրանք դառնան արվեստի աշխատողներ, այլ առաջին հերթին նրանց գեղագիտորեն զարգացնելու և դաստիարակելու համար: Իմանալու համար, թե ինչ է գեղագիտական ճաշակը, թե ինչպես իրականացնել դրա դաստիարակությունը,նախ պետք է իմանալ, թե տվյալ մարդն ինչ առարկաներով է շրջապատում իրեն, ինչն է գերադասում գեղանկարչություն, երաժշտություն, գեղաւվեստական գրականության մեջ, թե որքանով է ընդունակ վերլուծել գրական կերպարները և այլն:

Դպրոցականների գեղագիտական ճաշակի դաստիարակման և զարգացման համար կարևոր դեր կարող են խաղալ արվեստի նմուշները,կատարողական արվեստը,բնությունը: Գեղագիտական ճաշակը գեղեցիկը գնահատելու ընդունակությունն է գեղեցկության չափանիշները հասկանալու կարողությունը, գեղեցիկի նկատմամբ հուզական զգայունակությունը:

Մարդը չի կարող ապրել, աշխատել, պայքարել, վերապրել առանց գեղագիտության: Չ. Դարվինը գրում է «Եթե ինձ տրվի երկրորդ անգամ ապրել իմ կյանքը,ես ինձ, որպես կանոն,կառաջադրեի ընթերցել բանաստեղծական ստեղծագործություններ և երաժշտություն լսել թեկուզ շաբաթը մեկ անգամ»: Դպրոցում գեղագիտական միջոցները կամ համակարգը շատ ընդարձակ են:Այդ համակարգի մեջ կարելի դասել ուսումնական բոլոր առարկաները, խաղը, ուսումնաաշխատանքը, ինքնագործունեությունը, գեղարվեստական գրականությունը, բնությունը, թատերական արվեստը և այլն, որոնք առանձին-առանձին մեծ դեր են խաղում սովորողների գեղագիտական կուլտուրայի զարգացման համար: Սովորողների գեղագիտական դաստիարակության գործում անգնահատելի է բնության դերը: Կարևոր նշանակություն կարող են ունենալ արվեստի վերաբերյալ գրքերի ընթերցանությունը, մեծատաղանդ արվեստագետների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը, երաժշտության ունկնդրումը, վեպերի, վիպակների, պատմվածքների,պոեմների,բանաստեղծություններիընթերցանությունը,սիստեմատիկաբար ունկնդրումը: Սովորողների գեղագիտական դաստիարակության կարևոր ուղիներից կամ մեթոդներից են բացատրությունը, վերլուծությունը, դասախոսությունը, բանավեճը և այլն:Սովորողի գեղարվեստա-գեղագիտական ինքնուրուրույն գործունեության զարգացումը ապահովող կարևոր պայմանը ընտանիքի հետ պահպանվող կապն է:Այն ամենը ինչ աշակերտը տեսնում ու լսում է տանը,նրա ուշադրությունից դուրս չի մնում: Մեծերը երգում են, պարում, նկարում, նորոգում են բնակարանը, գնում թատրոն, կինո, հեռուստացույց են դիտում: Հետևելով, մասնակից լինելով այդ ամենին սովորողը գեղարվեստական տպավորություններ է ստանում: ՈՒստի անհրաժեշտ է հոգ տանել ընտանիքում գեղարվեստական բարենպաստ միջավայր ստեղծելու մասին:

Գեղագիտական դաստիարակության

ուղիներն ու միջոցները տարրական դպրոցում

Կրթական բարեփոխումների արդի շրջափուլում չափազանց արժեքավորում են նաև աճող սերնդի գեղագիտական դաստիարակության հիմունքների և նպատակների արդիական վերաիմաստավորումները: Խելամտորեն կազմակերպված ուսուցչի կողմից ուղղորդված գեղագիտական արժեքներին ծանոթացումն սկսում է տարրական դպրոցում և շարունակվում ամբողջ ուսումնառության ընթացքում:

Գեղագիտական դաստիարակությունը՝ որպես մարդու զգայական աշխարհի ձևավորման կարևոր միջոցի, տրվում է բացառիկ կարևոր դեր: Գեղագիտական դաստիարակության պահանջը տարրական դասարաններում ամենից առաջ և ամենից շատ բավարարում է մասնագիտական առարկաների՝ երաժշտության, կերպարվեստի դասերին: Դրանց հիմնական խնդիրը երեխայի գեղագիտական ճաշակի ձևավորումն է:

Այս առարկաների ուղղորդված ուսուցումը նպաստում է երաժշտական լսողության ձևավորմանը, լույսի, ստվերի, գծի ու պատկերների ընբռնման գունազգայության և գեղեցիկի զգացողության զարգացմանը: Գոյություն ունեն գեղագիտական ներգործություն ունեն

երեխաների գեղագիտական ճաշակի ձևավորման վրա: Դրանք են ցերեկույթները, նշանավոր մարդկանց հետ հանդիպումները, ժողովրդական տոներին նվիրված հանդեսները, հեքիաթի, ծաղկի տոները:

Այս գործընթացը զարգացնում ենք հատկապես բացատրական ընթերցանության և արտադասարանային ընթերցանության տարբերակներով, մայրենիի հարուստ բառագանձի, նրա հոգեհարազատ հնչյունների միջոցով: Գեղագիտական զգացողությունը և գեղարվեստական ճաշակը բաղկացած են մանր ու խոշոր բաղադրամասերից: Ընթերցանության դասերին մատուցվող թեմաները ունեն լայն հնարավորուէյուններ՝ճանաչելու բնության գեղեցկությունը, ըմբոշծնելու այն և խորապես գնահատելու գեղեցիկը: «Ապրիր հավերժ, հայրենի՝ բնաշխարհ» թեմայի նյութերը՝ «Աշուն» Վ.Տեյրան, «Սևանա լիճը», «Հայրենի թուփը», «Մեր գյուղն ումեր գետը» ուսումնասիրելիս աշակերտները ծանոթանում են բնության գեղեցկությանը՝ խորունկ, մութ անտառներին, գլգլա առուներին, զուլալ աղբյուրներին: Դրանք հրաշալի, ինքնատիպ ու անզուգական պատկերներ են: Աշակերտները սովորում են արժեքավորել բնության գեղեցկությունը և դառնում նրա մի մասնիկը: Նրանք հաղորդակից են դառնում մարդու և բնության պայքարին,իրենց հոգու աչքերով տեսնում աշնանային հազարերանգ գույները, հափշտակվում տերևների խաղով,անձրևի ադամանդյա կաթիլներով: Ամենատխուր աշնանային գույների մեջ նրանք գտնում են պայծառ, զվարթ պատկերներ: Այդ կերպ մշակվում է գեղեցիկը տեսնելու, գնահատելու յուրօրինակ զգացողություն: «Սևանա լիճը»թեման ուսումնասիրելիս աշակերտները ծանոթանում են հրաշք Սևանի գեղածիծաղ գեղեցկությանը: Հրաշեկ արևածագը,մայրամուտը, լճի անդորրը, ալիքների ռիթմը, նրանց վրա խայտացող լուսնի լույսը, ալիքների տիրական խռովքը անկրկնելի զուգորդումներ են ստեղծում՝ գեղեցիկի զգացողության, գեղագիտական ճաշակի ձևավորման տեսակետից: Սիրելի բնությունը, աշակերտներին մղել ճանաչել այն, տեսնել նրա գեղեցկությունները և գնահատել, սա է տարրական դասարանների ուսուցիչների գլխավոր խնդիրը: «Քանի վաելուչ և իմաստալից դպրոց է բնութինն,որ շրջապատ է զմեօք»,-ասել է մեծն Աբովյանը և կոչ արել գնալ դեպի բնությունը,սովորել նրանից: Գեղագիտական դաստիարակության առումով ուսուցչի խնդիրներից է երեխաների մեջ սեր արթնացնել դեպի մարդը արտաքին ներքին հոգևոր գեղեցկությունևեը, նրա գեղեցիկ գործերն ու արարքները:

«Հայկ և Բել», «Մեծ երաժշտագետը», «Սասունցի Դավիթ», «Թորոս Ռոսլին» և այլ նյութերը հնարավորություն են տալիս աշակերտներին մեջ դաստիարակելու ազնվություն,հայրենասիրություն, քաջություն, անձնազոհություն: Դրանք մարդկային լավագույն հատկանիշներ են և խորապես գեղեցկացնում են մարդուն: Նյութերի մշակման ժամանակ աշակերտները սովորում են տեսնել մարդկանց արտաքին ու հոգևոր գեղեցկությունները, ճանաչում են դրանք, գնահատում և արժեքավորում: Գիտակցում են, որ «Լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք»: Սովորում ենք,որ մարդն է բնության զարդը: Ահա ինչու նրա գեղեցկությունն էլ ավելի բարձրը պետք լինի: Սա գնահատվել է բոլոր ժամանակներում: Մարդու բնավորության դրական գծերն են՝ աշխատասիրությունը, սեր դեպի հայրենիքը, նվիրվածությունը ծնողներին: Այս ամենը պետք է զգալ, ապրել ու գնահատել տալ աշակերտներին, որպեսզի նրանք էլ ձգտեն դառնալ այդպիսին: Անձի գեղագիտական դաստիարակության համար առանձնահատուկ նշանակություն ունի երգի, երաժշտության, հնչյունների աշխահի ներդաշնակ ընկալումը: Այս տեսակետից կարևորվում են «Մեծ երաժշտագետը», «Հավերժական ծաղիկները» նյութերը, որոնք գույների ու գծերի անձայն սիմֆոնիաներ են: Նյութի ուսումնասիրությանը զուգահեռ կազմակերպում են կոմիտասյան երգերի ունկնդրում: Դասարանում տարածվում է Կոմիտասի «Անձրև եկավ շաղալեն» երգի թովիչ մեղեդին: Աշակերտները հմայված լսում են հոգեպար երգը: Թվում է, թե ամպամած երկնքից թափվում են անձրևի գոհար կաթիլները: Երաժշտության հուզաթավ ելևէջների ներքո ներկայացնում եմ մեծ երաժշտագետի կյանքի ասքը է փոքրիկ հուշի միջոցով: Այն ավելի տպավորիչ է դարձնում դասի ստեղծագործական մուտքը: Ապա հաջորդում են խոսքի մեծանուն վարպետ Հ. Շիրազի սրտահույզ տողերը՝

Թե չլիներ մեծ Կոմիտասն աշխարհում՝

Հայ ժողովուրդն այսքան անուշ չէր լինի:

Աշակերտներին ցուցադրում եմ Գ. Խանջյանի նույնքան հուզաթավ և տխրադալուկ նկարները և առաջարկում ունկնդրել «Մոկաց Միրզան»: Ծանոթացնում են երգի պատմությանը, այն բխել է քաջ նախնիների առնական ոգուց: Բոլոր ժամանակներում երգն օգնել է հայ նահատակներին՝ փրկելու հայրենի հողը: Աշակերտների հոգիները բյուրեղանում են: Ունկնդրում են նաև «Գարուն ա», «Կռունկ» երգերը՝ Լ. Զաքարյանի բարձրարվեստ կատարողականությամբ: Զվարթուն ու ժպտերես երեխաները հանկարծ դառնում են լրջախոհ:

Նրանց աչքերից ծորում են թախիծն ու կարոտը: Երգը հուզել է երեխաներին: Երգի մոգական ազդեցությունն ակներև է, այն դառնում է նրանց հոգու մի մասնիկը: Նրանց աչքերից ճառագում է համակ բարություն, որից հուզվում եմ ինքս: Այստեղ երեխաները մտնում են երաժշտության մեծ աշխարհ՝ հաճելի հույզերով փնտրելու, գտնելու, տեսնելու, հայտնաբերելու գեղեցիկը:

Աշակերտները գեղեցիկ դաս են առնում նաև կերպարվեստի և խոսքարվեստի զուգակցումից: Դա նպաստում է նյութի խոր և բազմակողմանի յուրացմանը: Աշակերտները մտնում են գույների ու ձևերի ներդաշնակության հրաշալի աշխարհը: Երեխաներին սովորեցնում ենք գույների խաղի միջոցով մեկնաբանել նկարների բովանդակությունը: Դրանք ստեղծվել են մարդկային աշխատանքի շնորհիվ: Այս նկարները մարդուն դարձնում են ավելի բարի և համարձակ: Դասարան ենք տանում Մ. Սարյանի, Լևի Տանի, Գ. Բաշինջաղյանի նկարները: Աշակեչտները բանավիճում են և հայտնագործում, որ ի տարբերություն Լևի Տանի աշնանային միապաղաղ գույների, Գ. Բաշինջաղյանի մութ ու մռայլ գիշերային տեսարանների՝ Մ. Սարյանի կտավներում առկայծվում է լույսը, թագավորում են վառ գույները: Իրենց հմայիչ գույներով այս նկարները խորհրդանշում են արևավառ Հայաստանը, Արաատյան դաշտի բերքառատ աշունը, տաք բնապատկերներով ու ծաղիկներով հորհրացող հայկական լեռնաշխարհը: Ցուցադրվող նկարները դիտելուց հետո երեխաները կարողանում են ընկալել նկարի բովանդակությունը, տարբերել գույները: «Ծաղիկները» նկարը անչափ բնական և հուզիչ է: Այս ծաղիկները միշտ կենդանի են և դարեր կապրեն: Մեծ տպավորություն են թողնում հայկական բնաշխարհի ծաղիկներն իրենց երփներամգ գույներով՝ կակաչ, մանուշակ, խատուտիկ: Աշակերտները համոզվում են, որ գեղեցիկը ստեղծվում և դարերին է հանձնվում իբրև մասունք՝անդուլ ստեղծագործ շախատանքի շնորհիվ: Նրանք փորձում են հոգու աչքերով թափանցել մեծ երգահանների, նկարիչների նուրբ հոգիների ծաղկաթերթերի, առեջքների մեջ և տեսնել այնտեղ բարություն, սեր, կամք, հայրենասիրություն, ինչու չէ՝ նաև տխրություն, թախիծ, տառապանք: Նրանք այսօր էլ մեր սաներին տալիս են իրենց հոգիների շռայլ գանձերը, կորովն ու սերը: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված են բազմաթիվ նյութեր՝ «Զոն՝ հարազատ դպրոցին», «Մոր ժպիտը», «Աղբյուրը», «Մեր լեզուն», «Իմ Ղարաբաղը»: Այդ գեղեցկությունն անպայման պետք է հասցնել աշակերտներին: Հարկավոր է օգտագործել բարձրարվստ ստեղծագործությունների, գեղարվեստական ընթերցումների, բանաստեղծությունների, դերերով արտասանությունների, ընտրովի կարդալու և փոքրիկ բեմականացումների հնարները: Երբ պոեզիան հասնում է

բարձրագույն գեղեցկության, դառնում է երաժշտություն: Ուստի խոսքի մեջ պետք է կարողանալ զգալ նրա հնչյունային ներդաշնակությունը, երաժշտականությունն ուգեղեցկությունը: Խոսքարվեստը արվեստի գեղեցիկ, հզոր ու ինքնատիպ ձևերից մեկն է: Երեխաներին պետք է սովորեցնել զգալ ու վերապրել այդ գեղեցկությունը:

Գեղագիտական դաստիարակությունը երեխաների ներաշխարհը հարստացնելու, նրանց զարգացած, նուրբ զգացմունքներ ունեցող մարդիկ դարձնելու տեսակետից անփոխարինելի նշանակություն ունի: Դա նաև ապահովում է սաների իրազեկությունն այսօրվա կյանքի բաբախուն հնքին: Աշակերտները հուզվում են, թախծում՝ անհայտ հերոսների շիրմաքարերի մոտ, հիանում ու հրճվումմոխիրներից վեր հառնող հայրենի քաղաքի՝Գյումրիի վերածննդով, Ախուրյանի գեղածիծաղ ափին զվարթանում ու մանկանում՝ դառնալով բնության մի մասնիկը:

Աշակերտների ուշադրությունը հրավիրում ենք սեփական արարքները, ընկերոջ վարքագիծը, կյանքի փոթորկաշունչ օրերին իրենց հասակակիցների սխրագործությունները, ղարաբաղյան ազատամարտիկների կյանքի ասքը գնահատելու հարցերի վրա: Այդ ամենը բարության, մարդասիրության, հայրենասիրության դասեր է տալիս՝գեղեցիկ ու հմայիչ դարձնելով մեր կյանքը:Երեխաների պատկերացումները կյանքի մասին թեև պարզ են, սակայն լի են ապագայի նկատմամբ վառ հույզերը:

Գեղագիտական դաստիարակությունը «Տեխնոլոգիա» առարկայի դասաժամերին

Գեղագիտական դաստիարակությունն աճող սերնդի համակողմանի զարգացման մասն է կազմում: Հիմնական միջոցներից մեկն էլ «Տեխնոլոգիա» առարկան է:

Տեխնոլոգիայի դասերի գլխավոր նպատակը երեխաների մեջ աշխատասիրության դաստիարակումը կամ էլ արհեստներ սովորեցնելը չէ: Այն անձի զարգացման արդունավետ միջոց է, հատկապես նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում: Այդ դասերին աշակերտները նախնական աշխատանքային հմտություններ են ձեռք բերում, ծանոթանում են տարբեր նյութերի հատկություններին,տիրապետում են դրանց մշակման եղանակներին, սովորում են ճիշտ կիրառել աշխատանքային գործիքները, խնայողաբար օգտագործել նյութերը: Իսկ այդ գիտելիքները, կարողությունները, որոնք սովորողները ձեռք են բերում աշխատանքային գործունեության գործընթացում, հիմնարար դեր են կատարում մյուս առարկաների յուրացման համար:

Ազգային դպրոցի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է նրանց պատշաճ վարքի ու վարվելակերպի ձևավորումը: Գեղագիտական դաստիարակությունն աճող սերնդի համակողմանի զարգացման մասն է կազմում: Մանկավարժագիտության մեջ գեղագիտական դաստիարակությունը դիտվում է դաստիարակության մյուս բաղադրամասերից ոչ թե կտրված, այլ նրանց հետ սերտ կապի մեջ: Չի կարող լինել նաև աշխատանքային դաստիարակություն առանց աշխատանքի նպատակների, բովանդակության և ընթացքի մեջ գեղեցիկը տեսնելու, բարոյականության ձևավորում՝ առանց արարքի գեղեցկությանը հասուն լինելու, ֆիզիկական զարգացում՝ առանց պատկերացում կազմելու մարդու մարմնի կատարելության մասին: Դրա հետ մեկտեղ նաև չի կարելի պատկերացնել գղագիտական դաստիարակություն կյանքից, ակտիվ ստեղծագործ աշխատանքից կտրված և առանց կատարելատիպերին հասնելու պայքարի: Իրագործել կյանքի հետ համակցված գեղագիտական դաստիարակություն՝ սովորողներին ցույց տալով ֆիզիկական և մտավոր աշխատանքի, բարոյական և ֆիզիկական կատարելության գեղեցկությունը, մենք նպաստում

ենք անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնախնդրի առավել արդունավետ լուծմանը:

Գիտական մանկավարժությունը գեղագիտական դաստիարակությունը բնորոշում է որպես շրջապատող իրականության՝ բնության մեջ, հասարակական կյանքում, աշխատանքում, արվեստում գեղցկությունը նպատակադրված ընկալելու, զգալու, ճիշտ հասկանալու և գնահատելու ընդունակության դաստիարակում: Գեղագիտական դաստիարակություն հասկացության մեջ ներառվում է նաև կյանքում և արվեստում գեղեցիկի ստեղծմանը ուժերի ներածին չափով մասակցելու պահանջմունքի և ընդունակությունների դաստիարակումը: Այդ նկատառումով ազգային դպրոցում գեղագիտական դաստիարակության խնդիրն է սովորողների մեջ զարգացնել գեղագիտական պահանջմունքները և գեղագիտական զգացումներ:

Գեղագիտական դաստիարակության էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ է նշանակում գեղեցիկը՝ որպես գեղագիտական զգացմունքների և ապրումների աղբյուր: Գեղագիտությունն իբրև գեղեցիկ է դիտում կյանքն իր զարգացման մեջ, իր առաջընթացով, հնի, իր դարն ապրածի դեմ նորի, առաջադիմականի պայքարով: Գեղագիտական դաստիարակությունն օգնում է ճիշտ ըմբռնել կյանքի իմաստը, հասկանալ, թե ինչ և ինչպես պետք է փոխել կյանքում, ինչը պետք է պահպանել որպես դրական, բարի,մարդասիրական:Բարդ է այդ գործընթացը, բազմաբնույթ և դրա հետ մեկտեղ, գործուն ու ստեղծարար գործընթաց: Գեղագիտական ընդունակությունների զարգացումը և գեղագիտական պահանջմունքների բավարարումը կապված են մարդու մեջ մարդկային որակների զարգացման հետ:

Գեղագիտական դաստիարակությունը ծառայում է սովորողների բարոյական գծերի ձևավորմանը, զարգացնում է նրանց գեղագիտական ընդունակությունը, օգնում՝ է ուժերը ներածին չափով ներդնելու արվեստում, աշխատանքում գեղեցիկը ստեղծելուն, գեղեցիկի օրենքներով ստեղծագործելուն: Բալզակն արվեստի վերափոխիչ ուժի մասին ասել է՝ «Թագավորները ժողովրդի վրա իշխում են որոշակի ժամանակաշրջանում, իսկ գեղագետը՝ դարեր շարունակ, նա փոխում է իրերի դեմքը: Արվեստը հզոր ուժ է»:

Սովորողների գեղագիտական դաստիարակությունն իրականանում է դպրոցում՝ յուրաքանչյուր ուսումնական առարկայի ուսումնասիրման ժամանակ: Ռուս մեծ

մանկավարժ ՈՒՇինսկին գտնում էր, որ «Ամեն մի գիտության մեջ ինչ-որ չափով կա գեղագիտական տարր»: Տարրական դպրոցում համակողմանիորեն զարգացած անձի ձևավորման համար լուրջ դերակատարում է վերապահված «Տեխնոլոգիա» առարկային: Այս նպատակի իրագործման համար առնվազն անհեթեթություն է հաշտվել հին դպրոցի ուսումնական բնագավառները հիմնականի ու երկրորդականի բաժանելու գաղափարի հետ, երբ չափազանց մեծ ուշադրություն դարձնելով առաջինին, բացահայտ թերագնահատվում էր երկրորդը:

Անհատի համակողմանի և ներդաշնակ զարգացման խնդիրը ուսուցիչներին պարտավորեցնում է բարձր մանկավարժական վարպետությամբ ուսումնասիրել ուսումնական բնագավառները ներկայացնող պետական պարտադիր բոլոր առարկաները՝ մայրենի լեզուն, մաթեմատիկան, տեխնոլոգիան, մյուսները: Յուրաքանչյուր առարկա առավելագույնս օգտագործում է սովորողների հնարավորությունները, զարգացնում է նրանց ընդունակությունները, ճիշտ և համաձայնեցված շարժումները, զինում է անհրաժեշտ գիտելիքներով, ձևավորում է աշխատանքային տարրական կարողություններ և հմտություններ, գեղագիտական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, օգնում է շրջապատող իրականությանը, առարկայական աշխարհին նայել ոչ թե սպառողի, այլ ստեղծագործողի աչքերով, գիտակցել աշխատանքի նշանակությունը՝նյութերը ծառայեցնելով մարդկային անմիջական կարիքներին:

«Տեխնոլոգիա» առարկան երեխաներին սովորեցնում է ստեղծագործել, վերլուծել աշխատանքային գործընթացը, վերահսկել սեփական աշխատանքը, իմաստավորել և հասկանալ շրջապատող առարկայական աշխարհը, գնահատել շրջապատի գեղեցկությունը, պատրաստել նույնպիսի գեղեցիկ և հարմարավետ շինվածքներ՝պահպանելով դիզայնի հիմնական սկզբունքը: Ամենորյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո, գեղեցիկի միջավայրում ապրելու ցանկության պահանջմունքի ձևավորման և զարգացմանը: Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղարվեստական կրթության հիմնական պայմանն ու միջոցն է: Սակայն «Տեխնոլոգիա»առարկան միայն գեղագիտական դաստիարակության միջոց չէ, այն երեխայի բազմակողմանի զարգացման հիմքն է,այսինքն՝ գեղագիտական, բարոյական, մտավոր, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակության գործուն միջոց է:«Տեխնոլոգիայի»դասերին աշակերտները պիտի ճանաչեն, մտածեն, և ոչ թե«ձեռքը

վարժեցնելով»հնարներ յուրացնեն կամ պարզապես շինվածք պատրաստեն: Այդ դասերի գլխավոր նպատակը երեխաների մեջ աշխատասիրության դաստիարակումը կամ էլ արհեստներ սովորեցնելը չէ: Աշխատանքը միայն պրակտիկ, ֆիզիկական գործունեություն չէ, իսկ աշխատասիրությունը ենթադրում է մարդու մեջ այնպիսի անհատական որակների առկայություն, ինչպիսիք են կամքը, կազմակերպվածությունը և այլն, որոնք երևան են գալիս ոչ միայն ձեռքի աշխատանքի ժամանակ, այլև ցանկացած արդյունավետ գործունեության ընթացքում: Այն դասերի նպատակը միայն այն չէ, որ աշակերտներին սովորեցնել ծեփակերտել, կարել, ասեղնագործել: Դրանք յուրօրինակ հոգեբանական և դիդակտիկ հինք ունեն՝ պրակտիկ առարկայական գործունեությունը: Եվ հենց սա է«Տեխնոլոգիան» ուսումնական առարկայի որոշակի առավելությունը, որոնք չունեն այլ ուսումնական առարկաներ: Պրակտիկ առարկայական գործունեությունը անձի զարգացման արդյունավետ միջոց է, հատկապես նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում: Տարրական դպրոցում, պրակտիկ առարկայական գործունեությունը հնարավորություն է տալիս երեխային նախապատրաստելու հետագա աշխատանքին, տարբեր նյութերի հետ աշխատելու ձևերին, դաստիարակել«նյութի յուրօրինակ զգացողություն», քանի որ առանց դրա անհնար է ազատ, գեղարվեստական-ստեղծագործական գործունեություն: Կրտսեր դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայի դասերին երեխաները նախնական աշխատանքային հնտություններ են ձեռք բերում, ծանոթանում են տարբեր նյութերի հատկություններին, տիրապետում են դրանց մշակման եղանակներին, սովորում են ճիշտ կիրառել աշխատանքային գործիքները, խնայողաբար օգտագործել նյութերը: Աշխատանքային գործունեությունը զարգանում է խոսքը, մտածողությունը, աչքաչափը, տարածական պատկերացումները, համաձայնեցվում է շարժումները: Գիտելիքները, կարողությունները, որոնք սովորողները ձեռք են բերում պրակտիկ-առարկայական գործունեության ընթացքում, ամրապնդում են աշխատանքային գործունեության գործընթացում և հիմնարար դեր են կատարում մյուս առարկաների լավ յուրացման համար: «Տեխնոլոգիա» առարկան կրտսեր դպրոցում գեղագիտական դաստիարակության հիմնական միջոցներից մեկն է այն նաև ստեղծագործական ունակությունների և կարողությունների զարգացման միջոց է: Որոշ երեխաներ հենց այս առարկայի դասաժամերին են կարողանում լիարժեքորեն ինքնադրսևորվել ու ինքնաարտահայտվել: Լայն ու բազմակողմանի են կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության հնարավորությունները այդ դասաժամերին: Առանց գեղագիտական

հարաբերությունների ստեղծման հնարավոր չէ բարձրացնել առարկայի դասավանդման արդյունավետությունը,առանց դրա անմտություն կլինի գեղագիտական համակարգի առարկաների լիարժեք ներգործությունը և նպատակների իրոգործումը: Ուսուցիչների կարևոր խնդիրներից մեկը աշխատանքի նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի ձևավորումը է: Իսկ այդ ենթատեքստում հասկացվում է այնպիս հարաբերություն, որը ենթադրում է՝:

ա.Գնահատում, գնահատել աշխատանքը գեղեցիկի տեսանկյունից, տարբերակել գեղեցիկ և տգեղ իրերը,

բ. Բավարվածություն, դիտողի կողմից աշխատանքի արդյունքից ստացած բավականությունը կամ անբավարված լինելը, նկատի է առնվում գեղեցիկի նկատմամբ պահանջմունքը,

գ. Ստեղծագործել գեղեցիկի օրենքներով: Դա աշխատանքի նկատմամբ գեղագիտական հարաբերության առավել ակտիվ ձևն է: Ստեղծագործել գեղեցիկի օրենքներով նշանակում է գեղեցիկի օրենքներով նշանակում է ստեղծագործել՝ ըստ

կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը հիմնականում իրականանում է շինվածքի պատրաստման ժամանակ: Նմուշի ընտրությունը, աշխատանքի պլանավորումը, կառուցվածքի վերլուծությունը, գծագրի վերլուծությունը, նյութերի ճիշտ ընտրությունը, շինվածքի պատրաստման գործնական աշխատանքը, վերջնամշակումը,այս ամենը պետք է սովորողին գեղագիտորեն դաստիարակի: Ընդ որում՝ այս ներգործությունն անընդմեջ պետք է իրականացնել;

«Տեխնոլոգիա» առարկայի ծրագրում առաջարկվում են աշխատանքի բազմապիսի տեսակներ՝ աշխատանք թղթով և ստվարաթղթով, մանածագործական նյութերով, բնական և արհեստական նյութերով: Աշխատանքի այս վերջին տեսակը շատ մոտ է պատկերավոր գործունեությանը, օրինակ՝ նյութերում կաղին, տերև, կոն, ծառի արմատ և այլն: Երեխաները կռահում են թռչունների, կենդանիների պատկերների առանձին տարրեր և համադրում դրանք:

«Մարդն ինքնին նկարիչ է: Նա ամենուրեք, այս կամ այն ձևով աշխատում է գեղեցիկը մտցնել իր կյանքի մեջ» ոչ միայն ընկալել գեղեցիկը, այլև ստեղծել այն, սա է գեղագիտական դաստիարակության պահանջը: Մանկավարժական գիտությունը գեղագիտական դաստիարակության առաջ աշխարհի գեղագիտական փոփոխման խնդիր է դրել: Եվ

ուսուցիչները պետք է կրտսեր դպրոցականների մեջ ոչ միայն ձևավորեն գեղեցիկը զգալու, հասկանալու ունակություններ, այլև դաստիարակեն այն ստեղծելու պահանջներ, կարողություններ և հնարավորություններ:

Ժամանակակից դպրոցում սովորողի գեղագիտական դաստիարակությունն ընդհանուր դաստիարակության կարևորագույն խնդիրներից մեկն է: Այն իրականացնում են նաև կրտսեր դպրոցի ուսուցիչները: Վերջիններս գործ ունեն մարդկային գիտակցության ամենանուրբ շերտերի հետ և ձևավորում են աճող սերնդի հոգևոր կերպարը: Նրանց խոսքը դաստիարակչական կատարյալ զենք է: Գրավոր և բանավոր խոսքը դաստիարակության գլխավոր միջոցներ են: Գեղագիտական դաստիարակության իրականացվում է ամբողջ դասի ընթացքում՝ բոլոր առարկաների դասավանդման ժամանակ:Գեղագիտական դաստիարակությունը երկարատև, բարդ և բազմակողմանի գործընթաց է: Նրա ձևերն ու մեթոդները բազմաբնույթ են: Եվ միայն ձևերի ամբողջական կիրառման շնորհիվ կարելի է հասնել գեղագիտական բարձ մակարդակի:

Եզրակացություն

Ուսումնասիրելով «Գեղագիտական դաստիարակությունը դպրոցում» հանգում ենք հետևյալ եզրակացության, որ գեղագիտական դաստիարակութունը բազմակողմանի զարգացած հիմնական հատկություններից մեկն է: Տարրական դասարաններում այն իրականացվում է բոլոր առարկաների դասերի ընթացքում: Սովորողների մեջ գեղագիտական ճաշակի ձևավորումը խիստ աշխատատար գործընթաց է և ուսուցիչների կարևորագույն խնդիրներից մեկն է: Գեղեցիկը գոյություն ունի մեր կամքից ու գիտակցությունից անկախ, սակայն բացահայտվում է մարդու կողմից և ապրում նրա հոգում: Գեղագիտական դաստիարակությունը բազմակողմանի զարգացած անձնավորության հիմնական բնութագրիչն է: Այն կրտսեր դպրոցականների ունակությունների ձևավորման զուգընթաց թույլ է տալիս ճիշտ ընկալել և հասկանալ գեղեցիկը շրջապատում, հարկ եղած դեպքում՝ անձամբ մասնակցել դրա արարմանը:

Բարոյական սկզբունքները կարևոր դեր են խաղում անձի գեղագիտական դաստիարակության գործում, եթե մարդն իր կյանքում և գործունեության մեջ ղեկավորվում է բարոյական

սկզբունքներով, ապա դա հանդես է գալիս իբրև նրա վարքի կարևորագույն հիմք՝ համապատասխանելով գեղագիտական ուսուցման ժամանակակից պահանջներին: Երեխայի համար գեղեցիկի աշխարհը սկսվում է ընտանիքից, մարդու զգայական ընկալումը, ոգևորությունը, ճաշակի ձևավորումը, այլ մարդու հոգևոր աշխարհ ներթափանցումն առաջին հերթին կայանում են ընտանիքում: Երեխայի զարգացման ընթացքում ծնողների ուշադրության պակասի հետևանքով նկատվում են մտավոր, ֆիզիկական, զգացմունքային, հոգեկան թերզարգացում:

Ժամանակակից դպրոցում սովորողի գեղագիտական դաստիարակությունն ընդհանուր դաստիարակության կարևորագույն խնդիրներից մեկն է: Այն իրականացնում են նաև կրտսեր դպրոցի ուսուցիչները: Վերջիններս գործ ունեն մարդկային գիտակցության ամենանուրբ շերտերի հետ և ձևավորում են աճող սերնդի հոգևոր կերպարը: Նրանց խոսքը դաստիարակչական կատարյալ զենք է: Գրավոր և բանավոր խոսքը դպրոցում գեղագիտական դաստիարակության գլխավոր միջոցներ են: Գեղագիտական դաստիարակություն իրականացվում է ամբողջ դասի ընթացքում՝ բոլոր առարկաների դասավանդման ժամանակ:

ՈՒշինսկին գրել է. «Յուրաքանչյուր գիտության մեջ շատ թե քիչ կա գեղագիտական տարր, որը դաստիարակը պետք է նկատի ունենա՝ երեխաներին հաղորդելու համար»: Գեղագիտական դաստիարակություն իրականացվում է խնդիրներ լուծելիս, հաշվողական հմտությունների ձևավորման գործընթացում, երկրաչափական նյութի մեջ, հանրահաշվական գործողությունների ուսումնասիրմանը զուգընթաց և այլն:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ունեն գեղարվեստա- գեղագիտական զարգացման մեծ հնարավորություններ: Աշակերտները սովորաբար շատ են հետաքրքրվում նկարչությամբ, ծեփով, երգեցողությամբ, երաժշտությամբ: Այդ գործունեության ճիշտ կազմակերպումը, մի կողմից նպաստում նրանց գեղագիտական զգացմունքների զարգացմանը, մյուս կողմից՝ համապատասխան ընդունակությունների բաղադրիչների զարգացմանը (ի հայտ են գալիս համամասնությունների և հարաբերությունների ճիշտ գնահատականը,լսողության և տեսողության նուրբ տարբերակումը, լսողական ընդունակությունը և այլ): Տարրական դասարանների շատ աշակերտներ սկսում են զբաղվել գրական ստեղծագործությամբ.գրում են բանաստեղծություններ, ոչ մեծ հեքիաթներ, պատմվածքներ: Այս ամենը նախադրյալ է ավելի մեծ տարիքում ընդունակությունների զարգացման համար: Գեղագիտական

դաստիարակությունը դիտում է որպես կյանքում և արվեստում գեղեցիկն ընկալելու, զգալու, հասկանալու ունակությունների զարգացում ,որպես շրջապատող աշխարը գեղեցիկի օրենքներով վերափոխելու երեխայի ձգտումի դաստիարակում, որպես հաղորդակցում գեղարվեստական գործունեությանը ստեղծագործական ունակությունների զարգացում: Գեղագիտական դաստիարակության բնագավառում հատուկ դեր է հատկացվում արվեստին: Հուզելով և ուրախացնելով՝ արվեստը աշակերտների առջև բացահայտում է կենսական երևույթների սոցիալական իմաստ, ստիպում է նրանց քննախույզ հայացքով նայել շրջապատող աշխարհին, արթնացնում է բարին գնահատելու, չարը դատապարտելու զգացումներ: Արվեստի միջոցով կատարվող գեղագիտական դաստիարակությունը կոչնում է«Գեղարվեստական դաստիարակություն»:

Աշխահում գործում է ոչ միայն անհրաժեշտի ու օգտակարի, այլև գեղեցիկի օրենքը: Այն պահից ի վեր, երբ մարդը կարողացավ հիանալ ծաղկաթերթիկների գեղեցկությամբ, մայրամուտով և բնության այլ հրաշալիքներով, նա սկսեց հիանալ նաև իրենով.

Մարդն ըմբռնեց գեղեցիկը...

Գրականություն

1.Վ.Ա.Կրուտեցկի«Մանկավարժական հոգեբանության հիմունքները»

Երևան 1976թ.

2.Լ.Թորգոմյան <<Մանկավարժական ընդհանուր հիմունքներ>>

Երևան 2005թ.

3.Յ. Բորև <<Գեղագիտություն>> Երևան 1982թ

4.Վ. Կ. Շոխին <<Գեղագիտական դաստիարակություն>> Երևան 1975թ

5.Ն. Ա. Վետլուգինայի <<Գեղագիտական դաստիարակությունը մանկապարտեզում>> Երևան 1990թ

6.Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր 2012թ

7.Նախաշավիղ 2013թ